**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-22/64 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **08 ապրիլի 2022թ.**

2022թ-ի ապրիլի 5 - ապրիլի 8-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ հողի թվային ցուցիչով խտաչափի ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-22/64 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Դ. Պետրոսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 21T-4C052 թեմայի ղեկավար, տ.գ.դ, պրոֆեսոր, |
| Պ. Տոնապետյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 21T-4B008 գիտական թեմայի ղեկավար, ամբիոնի դոցենտ, |
| Ս. Ռաֆայելյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 21T-4C052 թեմայի կատարող, տ.գ.թ. դոցենտ, |
| Ս. Հովհաննիսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 21T-4C052 թեմայի կատարող, տ.գ.թ. դոցենտ, |
| Գ. Երիցյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 21T-4B008 գիտական թեմայի կատարող: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Պետրոսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

5. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2022թ-ի ապրիլի 5-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված գնման առարկաների ձեռքբերման համար առավելագույն ընդհանուր գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Հողի թվային ցուցիչով խտաչափ | 700000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-22/64 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Դ. Պետրոսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Պ. Տոնապետյան ____________

Ս. Ռաֆայելյան ____________

Ս. Հովհաննիսյան ____________

Գ. Երիցյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան